



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայում՝ ավելի ամուր գործընկերություններ հանուն ավելի հզոր հարևանության

[ԵՄ-ն առաջարկում է ավելի ամուր գործընկերություններ հանուն ավելի հզոր հարևանության

ԵՀՔ վերանայում]

Բրյուսել, 18 նոյեմբերի 2015թ

Եվրոպական հանձնաժողովը և ԵՄ-ն արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչն այսօր հրապարակեցին «Եվրոպական հարևանության քաղաքականության» (ԵՀՔ) վերանայման հիմնական կետերը, ներկայացնելով Եվրամիության վերանայված մոտեցումն իր արևելքի և հարավի հարևանների նկատմամբ: ԵՀՔ վերանայումը հետևում է ԵՄ անդամ պետությունների, գործընկեր երկրների, միջազգային կազմակերպությունների, սոցիալական գործընկերների քաղաքացիական հասարակության և ակադեմիական շրջանների ներկայացուցիչների հետ ընդգրկուն խորհրդակցություններից հետո:

«Հարևանների հետ ավելի ամուր գործընկերությունը Եվրոպական միության համար առանցքային նշանակություն ունի է, մինչդեռ մենք դիմակայում ենք բազմաթիվ մարտահրավերներ մեր սահմանների ներսում և անդին: Ահաբեկչական հարձակումները ուրբաթ Փարիզում, ինչպես նաև վերջին հարձակումները Լիբանանում, Եգիպտոսում, Թուրքիայում և Իրաքում կրկին անգամ վկայում են այն մասին, որ մենք բախվում ենք այնպիսի սպառնալիքների հետ, որոնք զլոբբալ են և պետք է հաղթահարվեն միջազգային համայնքի կողմից միասնաբար: Բոլորս միասին պետք է կառուցենք ավելի անվտանգ միջավայր, փորձենք լուծել մեր ընդհանուր տարածաշրջանի բազում ճգնաժամերը, աջակցենք ամենա աղքատ գոտիների զարգացմանն ու աճին և լուծենք միգրացիա ծնող արմատական դրդապատճառները: Դա է հենց ԵՀՔ վերանայման նպատակը, որը կխթանի մեր ընդհանուր արժեքներն ու շահերը, և գործընկերներ երկրներին կներգրավի անվտանգության հարցերով ընդլայնված համագործակցության մեջ: Այսօր սահմանված միջոցառումների նպատակն է միասնաբար մշակել ուղիներ մեր և ԵՄ գործընկեր երկրների հասարակությունների ճկունության ամրապնդման, ինչպես նաև ընդհանուր նպատակի շուրջ արդյունավետ համագործակցություն իրականացնելու կարողությունների հզորացման ուղղությամբ», սսաց բարձր ներկայացուցիչ/փոխնախագահ ֆեդերիկա Մոզերինին:

«ԵՄ-ն ամենա հրատապ մարտահրավերը մեր Հարևանության կայունության ապահովումն է: Հակամարտությունները, ահաբեկչությունը, ծայրահեղականությունը սպառնում են բոլորիս: Մակայն աղքատությունը, կոռուպցիան և վատ կառավարումը նույնպես ծնում են անապահովության վտանգ: Ահա թե ինչու մենք կրկին կկենտրոնացնենք հարաբերությունները մեր գործընկեր երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում ընդհանուր նպատակների ուղղությամբ: Մասնավորապես կարևորում ենք տնտեսական զարգացումը, հիմնական շեշտը դնելով երիտասարդների զբաղվածության և հմտությունների վրա», ավելացրեց Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հանձնակատար Յոհաննես Հասնը:

Կայունացում, տարբերակված մոտեցում և պատկանելիություն

Կայունության ապահովումը կլինի ԵՀՔ մանդատի հիմնական քաղաքական առաջնահերթությունը: Տարբերակված մոտեցումը և ավելի ընդարձակ փոխադարձ պատկանելիությունը կլինեն նոր ԵՀՔ հաջորդ կարևոր բաղադրիչները՝ ընդունելով, որ ոչ բոլոր ԵՄ գործընկերներն են ձգտում համապատասխանել ԵՄ կանոններին և չափանիշներին, և հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի նկրտումները ԵՄ-ն հետ գործընկերության բնույթի և շրջանակի վերաբերյալ: ԵՄ-ն բարձր կպահի և կշարունակի խթանել համամարդկային արժեքները ԵՀՔ միջոցով՝ ձգտելով ավելի արդյունավետ ուղիներ սահմանել ժողովրդավարության, մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և օրենքի գերակայության խթանման համար:

Առանցքային ոլորտներ

ԵՀՔ նոր քաղաքականությունը կմոբիլիզացնի ջանքերը ներառական տնտեսական և սոցիալական զարգացման ուղղությամբ: Տնտեսական կայունությանն ուղղված առանցքային գործողություններից կլինեն նոր աշխատատեղերը երիտասարդների համար: Անվտանգությունը կլինի գործընկերների հետ համագործակցության նոր ուղղություն՝ հիմնականում կենտրոնանալով հակամարտությունների կանխարգելման, ահաբեկչության դեմ պայքարի և հակահամաճարակային արմատականացման քաղաքականություն շուրջ: Անվտանգ և օրինական շարժունակությունը մի կողմից, և անկանոն միգրացիան, մարդկային թրաֆիքինգը և մաքսանենգությունը մյուս կողմից կլինեն հաջորդ գերակա ուղղությունները: Եվ վերջում, առավել մեծ ուշադրություն կդարձվի գործընկերների հետ համագործակցությանը էներգիայի անվտանգության և կլիմայի գործողությունների շուրջ:

Ավելի շատ ճկունություն, արդյունավետություն և նոր գործընկերության մոտեցում:

ԵՄ-ն գործընկեր երկրներին առաջարկում է վերանայել և կենտրոնացնել հարաբերությունները հարևանների հետ՝ նպատակ ունենալով կարգավորել քաղաքական առաջնահերթությունները, որոնք երկուստեք ընդունված են որպես գործընկերության հիմք: Այս տարբերակը կքննարկվի գործընկերներ երկրների հետ և առանցքային նշանակություն կունենա նրանց պատկանելիության բարձրացման տեսակետից: Նպատակն է նաև ավելի ինտենսիվորեն ընդգրկել ԵՄ անդամ պետություններին հարևանության երկներում քաղաքականության սահմանման և իրականացման գործում:

ԵՀՔ-ն կներկայացնի աշխատանքային նոր մեթոդներ, ներառյալ երկրի զեկույցների տարեկան փաթեթների ավանդույթի վերացումը: Զեկույցները այսուհետ կլինեն ավելի համապատասխանեցված հարաբերությունների բնույթին և աշխատանքային օրացույցին:

Նոր ԵՀՔ-ն կապահովի առկա ֆինասական միջոցները տրամադրման ավելի ճկուն եղանակներ, որպեսզի ԵՄ-ն կարողանա ավելի սահուն արձագանքել հարևանության նոր մարտահրավերներին: Նախատեսվում է ավելի ամրապնդել համագործակցությունը քաղաքացիական հասարակության, սոցիալական գործընկերների և երիտասարդների հետ:

Տարածաշրջանային մակարդակում Արևելյան գործընկերությունն ավելի կամրապնդվի 2015 թվականի Ռիգայի գագաթնաժողովի հանձնառություններին համահունչ: Միջերկրածովյան միության դերը կարող է բարձրանալ հարավային հարևանների միջև համագործակցության աջակցության գործում: Անհրաժեշտության դեպքում նոր ԵՀՔ-ն կձգտի նաև ներգրավել հարևանությունից դուրս տարածաշրջանի մյուս դերակատարներին, տարածաշրջանի վերաբերող մարտահրավերները կարգավորելու նպատակով:

Հաջորդ քայլեր

Հաջորդ ամիսների ընթացքում այսօր՝ Համատեղ հաղորդագրությամբ ներկայացված առաջարկությունները կքննարկվեն ԵՄ անդամ պետությունների և գործընկեր երկրների հետ, միասնաբար նոր գերակայությունները որոշելու և հետագա հարաբերությունները ձևավորելու նպատակով:

Կարդալ Համատեղ հայտարարությունը՝

http://eeas.europa.eu/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_en.pdf

Լրացուցիչ տեղեկությունների համար՝

<http://ec.europa.eu/enlargement/neighbourhood/>

http://eeas.europa.eu/enp/index_en.htm

Ընդհանուր տեղեկություններ:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը մեկնարկել է 2004 թվականին: այն միտված է օգնելու ԵՄ աջակցության իրականացմանը և խթանելու կայունությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը մերձակա սահմանակից երկրներում: ԵՄ-ն շարունակում է մնալ հանձնառու այս նպատակներին, սակայն վերջին տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է ներկայացնել նոր մոտեցումներ՝ վերանայելով գերակայությունները և ներկայացնելով աշխատանքային նոր եղանակներ:

Նախագահ Յունկերի կողմից առաջարկված և ԵՄ անդամ պետությունների կողմից հարցված վերանայումը ենթարկվել է հանրային քննարկումների ստանալով ավելի քան 250 ներդրումներ ԵՄ անդամ պետությունների, գործընկեր կառավարությունների, ԵՄ կառույցների, միջազգային կազմակերպությունների, սոցիալական գործընկերների, գործարար համայնքի ներկայացուցիչների, հետազոտական կենտրոնների և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչների կողմից: Այս ընդգրկուն արձագանքը հաստատում է, որ անհրաժեշտ էր փոփոխել ԵՀՔ բովանդակությունն և մեթոդոլոգիան:

Կոնտակտային տվյալներ՝

- [Maja KOCIJANCIC](mailto:Maja.Kocijancic@eeas.europa.eu) (+32 2 298 65 70)
- [Catherine RAY](mailto:Catherine.Ray@eeas.europa.eu) (+32 2 296 99 21)
- [Nabila MASSRALI](mailto:Nabila.Massrali@eeas.europa.eu) (+32 2 296 92 18)
- [Adam KAZNOWSKI](mailto:Adam.Kaznowski@eeas.europa.eu) (+32 2 298 93 59)
- [Anca PADURARU](mailto:Anca.Paduraru@eeas.europa.eu) (+ 32 2 296 64 30)

General public inquiries: [Europe Direct](http://ec.europa.eu/europe-direct) by phone [00 800 67 89 10 11](tel:0080067891011) or by [email](mailto:eeas@ec.europa.eu)

